

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏՈՐ ԺՈՋԵ ԴԵ ԱՋԵՐԵԴՈ ՊԵՐՏԻԳԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով, հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց պաշտոնական այցով Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը, իր հարգելի տիկնոջ հետ:

Մեծարգո նախագահին ընկերակցում էին հանգուցյալ բարերար Գալուստ Կյուլպենկյանի դուստրը՝ ազնվափայլ տիկին Ռիտա Եսայանը, Կյուլպենկյան հիմնարկության հայկական մասնաճյուղի վարիչ և բարերարի եղբորորդի պր. Ռոբերտ Կյուլպենկյանը իր հարգելի տիկնոջ հետ և ֆրանսահայ հայտնի ճարտարապետ պր. Եդվարդ Ութուջյանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Վեհարանում սիրով և ջերմորեն ողջունեց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահի և նրա շքախմբի անդամների այցելությունը Մայր Աթոռ:

Հոկտեմբերի 3-ին, շաբաթ օր, երեկոյան ժամը 6-ին, հյուրերը Մայր Տաճարում ներկա եղան Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ բարերար Գալուստ Կյուլպենկյանի հիշատակին կատարված հոգեհանգստյան հանդիսավոր արարողության:

Հոկտեմբերի 4-ին, հյուրերը Մայր Տաճարում ներկա եղան Նորին Ս. Օծության գահակալության 9-րդ տարեդարձի առթիվ կատարված հանդիսավոր սուրբ պատարագին և ապա Վեհարանում կազմակերպված այլ հանդիսությանց:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահը և նրա շքախմբի անդամները այցելեցին Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, Հոգևոր Ճեմարանը, տպարանը, Ս. Հռիփսիմեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդի և Սևանի պատմական վանքերը: Հյուրերը այցելեցին նաև Օշականում Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցին և Մեծ Սրբի դամբարանը, Երևանում Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանը:

Հոկտեմբերի 6-ին, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանը ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահին և շքախմբի անդամներին:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանը և նրա շքախումբը հոկտեմբերի 7-ին հրաժեշտ առին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
8 հոկտեմբերի 1964 թ.